


ՆԱՐԻՆԵ ԱՐԳԱՐՅԱՆ, Երկնքից երեք խնձոր ընկավ, թարգմ. ռուսերենից՝ Նաիրա Խաչատրյանի, Ե., «Օրակույլ հրատ.» ՍՊԸ, 2017, 240 էջ:



Նարինե Արգարյանի արձակը ինքնատիպ է, ճշմարտապատում: Ստեղծագործական ուշագրավ մտքի շնորհիվ նա արդեն հարթել է իր ուղին գրական ապարեզում: Ն. Արգարյանը ապրում է Մոսկվայում և ստեղծագործում է ռուսերենով: Չնայած հայերեն չի գրում, սակայն պատկերում է հայ իրականությունը, ժողովրդի վարքուբարքը, հոգեբանությունը, ուստի նրան իրավամբ կարելի է համարել հայ կյանքի, հայ մարդու, հայկականության դեսպան արտերկրում: Թեպետ նոր, բայց արդեն միջազգային ճանաչում ունեցող անուն է: Արժանացել է ծանրակշիռ մրցանակների, ինչպես՝ *Ռուսաստանի ազգային-գրական՝ «Տարվա ձեռագիր»* և *«BABY-HOC»* (Նոր ռուսական բանասիրություն) մրցանակները:

Նրա ստեղծագործությունները թարգմանվել են տասնյակ լեզուներով, նաև հայերեն: Ն. Արգարյանի *«Երկնքից երեք խնձոր ընկավ»* վեպը լույս է տեսել 2015 թ., հայերեն թարգմանվել է 2017 թ.:

Վեպը հեռավոր մի փոքրիկ գյուղի՝ Մառանի ու նրա բնակիչների մասին է, որոնք տեսել են հարյուրավոր կյանքեր խլած երկրաշարժ, պատերազմ, սով, երաշտ: Գյուղում մնացել են միայն ծերերը, որոնց կարծես աշխարհը մոռացել է, և նրանք՝ ապրում են միմյանց ուժ տալով:

«Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպը բաղկացած է երեք մասից: Առաջինը՝ «Նրան, ով տեսել է», սկսվում է գրական լավագույն հնարանքով: Հեղինակը ընթերցողին մասնակից է դարձնում անսպասելի գործողությունների՝ առանց նկարագրական նախաբանի: Նրա առաջ «բացում է վարագույրը», և Անատոլիայի կերպարի ձևավորման աստիճանական ընթացքը դառնում է պատումի գլխավոր գեղարվեստական խնդիրը, և այդ խնդրի միջոցով էլ հեղինակը «բեմահարթակ է բերում» մյուս հերոսներին՝ գյուղի՝ իրար հոգսերով ապրող մարդկանց: Ն. Արգարյանը ասես շղթայի՝ որպես իրար հաջորդող օղակներ, ներկայացնում է գյուղի ապրած արհավիրքների ծանրությունը,

որոնք վաղեմի շեն Մառանից թողել են քսաներեք տուն: Հեղինակը հաջորդաբար պատմում է դեպքերը՝ իրականը անիրականին հյուսած:

Վեպի հերոսներն ապրում են իրենց փոքրիկ աշխարհում. այնտեղ հրաշալի նկատվում է գյուղական կոլորիտը: Ամեն ինչ հազար թելերով կապված է ավանդական կենցաղին, ապրելակերպին: Պատումը սկզբից մինչև վերջ շնչում է սիրով. գյուղացիները պատրաստ են իրար օգնել ու աջակցել, ապրում են միմյանց ցավերով ու հոգսերով, սիրով ու հարգանքով են վերաբերվում միմյանց նկատմամբ: Եվ այդ ամենը բնական է ու անկեղծ: Աբգարյանի հերոսները հոգեբանական բարդ անհատականություններ չեն, նրանք մարդկային իրական հարաբերությունների կրողներ են՝ գյուղական հուզաշխարհով ու հոգու մաքրությամբ, իրենց աշխարհընկալմամբ ու փիլիսոփայությամբ: Ահա, օրինակ, հերոսներից մեկը մտորում է. «Անգործությունից ավելի կործանարար բան չկա, անգործությունն ու պարապությունը կյանքն իմաստագրկում են», - և սրտի ցավով է մտածում, որ դարբնոցը, կարևորությունը կորցրած, «ծերանում է ու մեռնում» (77):

Հեղինակը աշխարհի շարժիչ ուժը համարում է սերը, բարությունը, նվիրվածությունը, արարումը: Վեպում չկա ոչ մի կոնֆլիկտ, ինչը հաճախ գրական ստեղծագործություններում անխուսափելի է, կա կյանք՝ անմոռնչ, անտրտուն, բարությամբ շաղախված, իսկ հերոսը պարզասիրտ, բարեպաշտ, հյուրասեր ու հյուրընկալ հայ գյուղացին է: Ժողովրդի կենսափիլիսոփայությունը դրսևորվում է գյուղի առօրյայում՝ հագեցած, հետաքրքիր, գունավոր գյուղական կոլորիտով, արտահայտված գյուղի մարդու պարզ, անմիջական հոգեբանությամբ: Այդ ամենը Ն. Աբգարյանը մատուցում է վառ պատկերամտածողությամբ, գյուղական կյանքի ու բնության երևույթների ժողովրդական իմաստավորմամբ և մեկնաբանմամբ:

Գրքի երկրորդ՝ «Նրան, ով պատմել է», մասում հեղինակը Մառան գյուղի անցուդարձին մասնակից է դարձնում Վալինկայի ու Վանոյի՝ Ռուսաստանից եկած տղայի ընտանիքին: Էտրիդանշական է նրանց ռուս հարսի՝ Նաստասյայի կերպարը: Նա կարծես մեծ աշխարհի ներկայացուցիչը լինի՝ հայտնված այդ փոքրիկ գյուղաշխարհում, որը Նաստասյայի համար բացահայտումների մի ամբողջ մոլորակ է դառնում: Հետաքրքրական է նրա՝ այդ աշխարհի ընկալումը: Նա տեսնում է այդ բնաշխարհի գեղեցկությունն ու այդտեղ ապրող մարդու դժվարությունները և նկատում վերջինիս բնավորության էական գծերը, որոնք դարձել են պայքարելու, կյանքը կառուցելու ուժ ու դիմակայություն: Արդարև, գրեթե ամեն մի տողում արտացոլվում է հայ գյուղացու ցավը, տառապանքը և, միաժամանակ, նրա հոգու վեհությունը, կամքի ուժը, ամեն-ամեն ինչ՝

իրականության բազմերանգ ու բազմաբնույթ ճշմարտությունը՝ մաքառումը հանուն ժողովրդի հոգևոր ու բարոյական արժեքների պահպանության, հանուն գյուղական մաքուր ու գեղեցիկ կյանքի գոյության, հանուն **սիրո ու բարության**: Կյանքի այդ մաքրությունն ու բարությունը վերհանելու առաքելության համար էլ Նարինե Աբգարյանի «Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպը 2016 թ. արժանացել է «Յասնայա պոլյանա» ամենամյա գրական մրցանակի՝ «21-րդ դար» անվանակարգում:

Վեպի առանցքը այդ գյուղի մարդն է՝ իր վեհությամբ, նվիրվածությամբ, մերձավորին սատար կանգնելու, իր ամենանվիրականը մարդկանց տալու մեծագույն կարողությամբ: **Սեր և բարություն**, որը տալիս ու վաստակում է մարդն իր ապրած կյանքով: Հենց այս գաղափարն է, որ ամփոփված է գրքի երրորդ՝ «Նրան, ով լսել է» մասում: Վաթսունութ տարեկան Վասիլի և հիսունութ տարեկան Անատոլիայի ապրած կյանքի, սիրո ու բարության արտացոլանքը հրաշքով ծնված իրենց աղջիկն է: Հեղինակը «Եզրափակիչ գլխում» ամբողջացնում է գրքի բովանդակությունը՝ «...ուղիղ մեկ տարի ու մեկ ամիս առաջ ...Սևոյանց Անատոլիան պառկեց մեռնելու՝ չիմանալով, թե ինչ հրաշքներ են իրեն սպասում, ու ահա այդ հրաշքն իրականություն է դարձել...» (238):

Նարինե Աբգարյանը վեպի սկզբից մինչև վերջ ասես մտովի շրջում է իր հայրենի բնօրրանով, շփվում անառիկ լեռների, կուսական անտառների, խորխոր ձորերի և այդ բնությունից ծնված անվեհեր մարդու հետ, որն իր հոգու նվիրական զգացողություններով մնացել է անխառն, մաքրամաքուր: Այդ ամենը մատուցված է հմուտ գրչով, երևույթների խոր ընկալմամբ և հայկականի շնչով ու լիցքով: Ռուսական “Eksmo” ամսագրի այն հարցին, թե որպես գրող ո՞ր հաճոյախոսությունն է իր համար արժեքավոր, նա նշում է. «Քննադատներից մեկն ասել էր, որ ես գրում եմ հայերեն՝ պարզապես ոռուերեն բառերով: Դա անսպասելի էր և շատ հաճելի»¹:

Տարեթվերի առումով ժամանակը զրքում պայմանական է, ու դա հասկանալու քիչ հուշումներ է տալիս հեղինակը: Ժամանակի ֆիզիկական դրսևորումներն ընդամենը կանգառներ են կյանքի ցիկլիկ թոհոբոհի ընթացքում՝ մեկը մյուսի նման, մեկը մյուսից բխող՝ մեկը նախապայման ու, ցավոք, կրկնվող մարմնավորումներով՝ պատերազմ, սով... Այդ ամենի փոխարեն վեպում մանրադիտակային ճշգրտությամբ արտացոլված են կարևորագույն ճշմարտությունները՝ մարդու, հասարակության, կյանքի, գոյության հիմնասյու-

¹ <https://eksmo.ru/interview/narine-abgaryan-kto-to-iz-kritikov-skazal-cto-ya-pishu-na-armyanskom-prosto-russkimi-slovami-ID5493583/>.

ները: Պարադոքս. մի կողմից՝ իրականությունից կտրված մի միկրոաշխարհ, մյուս կողմից, իրականություն՝ անատոմիկական մանրամասներով, կենցաղի, գյուղի ամեն մի օրը ներկայացնելու բոլոր նրբերանգներով:

Քննադատները Ն. Աբգարյանի «Երկնքից երեք խնձոր ընկավ» վեպը դասում են մոգական ռեալիզմի ժանրին ու զուգահեռներ տանում Մառան գյուղի և Գաբրիել Գարսիա Մարկեսի Մակոնդոյի միջև (հմմտ. <http://m.natsbest.ru/award/2016>): Մոգակա՞ն է արդյոք Ն. Աբգարյանի աշխարհը: Անշուշտ, Մառանը մոգական աշխարհ է՝ կորած սարերի բարձունքում, մեծ աշխարհից ու նրա թոհուբոհից կտրված հերոսներով: Հերոսներ, որոնց մարդասիրությունը, բարոյությունը, կյանքը սիրելու ունակությունը առօրյա իրականություն են և թերևս մարդկային ամենահզոր ուժը՝ արարման հետ միասին:

Ն. Աբգարյանի լեզուն պարզ է, միաժամանակ խորիմաստ: Ինչպես ինքն է նշել՝ «Որքան պարզ են բառերը, այնքան խորն է դրանց իմաստը» (էջ 184): Վեպի հերոսների նիստուկացը, սովորույթները նա պատկերում է հետաքրքիր շարադրանքով, ուրույն ոճով, երկխոսությունները կենդանի շունչ են հաղորդում պատումին: Լինելով հայի կենցաղի, ապրելակերպի, ազգային ոգու ճշմարտացի արտացոլում՝ Ն. Աբգարյանի վեպը իր ուրույն տեղն է գրավել արդի հայ գրականության մեջ:

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.Ա.